ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1, հեռ. +(374 11) 514-240

19 դեկտեմբեր 2018թ.

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Երևանի քաղաքապետարան ուղղված Ձեր հարցման առաջին կետի՝ Ձեզ ենք ուղարկում 2016-2017թթ. հարցումների տարեկան վիճակագրությունների հրապարակման էլեկտրոնային աղբյուրները՝ հետևյալ հղումներով.

https://www.yerevan.am/am/report/annual-report-2016/ ,
https://www.yerevan.am/am/report/annual-report-2017/

2018 թվականի 1-3 եռամսյակների ընթացքում Երևանի քաղաքապետարանի կողմից ստացված տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության մասին տեղեկատվությունը կամփոփվի և կհրապարակվի 2019 թվականի հունվար ամսին:

2016-2017 թվականների և 2018 թվականների 1-3 եռամսյակների ընթացքում Երևանի քաղաքապետարանի տեղեկություն ստանալու հարցման դիմողների՝ քաղաքացիների մասով թվաքանակի տեղեկությունները առկա են վերը նշված երկու հղումներում: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ նշված ժամանակահատվածում ՀԿ-ներից ստացվել է 2016թ.՝ 91 հարցում, 2017թ.՝ 71 հարցում, 2018թ.՝ 120 հարցում:

Ինչ վերաբերվում է լրագրողների կողմից ստացված հարցումներին ապա ըստ տարիների վիճակագրությունը հետևյալն է. 2016թ.՝ 175 հարցում, 2017թ.՝ 116 հարցում, 2018թ.՝ 137 հարցում (մինչև դեկտեմբերի 18-ը ներառյալ):